

Նրանք ունեն նշանակութիւն այն ժամանակ, երբ պետութիւնն է նրանց գործադրում և ոչ մասնաւոր բարեգործներ, կամ բարեգործական ընկերութիւններ։ Եւ իրօք ինչ կարող են անել դրամարկղները, երբ գեռատիները հիւծւում են ծանր աշխատանքից, երբ աշխատաւոր կինը տանջւում է 14—16 ժամ աշխատանքից, երբ բանւորն օրն ի բուն փոշու և կեղտի մէջ է արհեստանոցում, երբ աշխատաւորը տքնում է աշխատանքի բեռի տակ, որպէս մի գրաստ, երբ 16 ժամ աշխատելուց յետոյ բանւոր-աշխատաւորը զնում է գիշերելու նկուղում մութ և խոնաւ, առանց լոյսի, երբ նա օրինաւոր հագուստ չունի, երբ նա կարգին սնունդ չունի։ Այլևս չեմ շարունակում։

Միթէ՞ այդպիսի պայմաններում, որոնք տեղի ունեն կապիտալիստական երկրներում և նրանց գաղութներում, ինքնօգնութեան կամ փոխադարձ օղնութեան դրամարկղները կարող են կասեցնել պալարախտի յաղթական երթը։

Գուցէ ես չափագանցեցնում եմ աշխատանքի պայմանների վասութիւնը, բայց մեծամասնութեամբ դրանք ճշշտ են։

Լաւ ապրուստ և աշխատանքի պաշտպանութիւն, ահա այն գործոնները, որոնք կը տանեն յաղթանակ պալարախտի դէմ։

Ահա այդ նպատակին են գիմում խորհրդային երկրների արհեստակցական միութիւններն ու հասարակական կազմակերպութիւնները և պէտք է ընդունել, որ ոչ մի երկրում այնպէս չէ դրանք աշխատանքի պաշտպանութեան, մօր և մանկան պաշտպանութեան, աշխատաւոր կնոջ և գեռատի աշխատաւորների պաշտպանութեան գործը, որպէս այդ կայ խորհրդային երկրներում։

Ենորհիւ ձեռք առած միջոցների, սոցիալական միւս հիւանդութիւնը — սիֆիլիսը, տեղի է տւել արդէն, հերթը պալարախտինն է, և կը դայ մի ժամանակ, երբ սա էլ տեղի կը տայ գործադրած միջոցներին։

ԲԺ. Ա. ՄԵԼԻՔԵԱՆ

Երևան

Առողջապահութեան ժողովրդական կոմիտարիատ  
Սանհիտարական Հուսաւորութեան Յենթարաժնի վարիչ

Բոլոր ծաղիկներուն մէջ, մարդկային ծաղիկը ամենէն շատ պէտք ունի արևի և լոյսի։

ՄԻՇԱԿ